

Մրցույթ՝ «Երևանի Ա. Մանուկյանի անվան թիվ 93 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «ՆԶՊ» (11 դասաժամ), «Ինֆորմատիկա» (16 դասաժամ), «Ազգային երգ ու պար» (7 դասաժամ), «Ֆրանսերեն» (27 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ծև 1),
 - 1 լուսանկար 3x4 չափի,
 - բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
 - անձը հաստատող փաստաթուղթ,
 - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
 - ինքնակենսագրություն (ծև 5),
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
 - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
 - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
 - հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:
- Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թ. ապրիլի 3-ից մինչև ապրիլի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. ապրիլի 19-ին՝ ժամը 13:30-ին**, Երևանի Ա.

Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ դպրոցում: Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 5-րդ փողոց : Տեղեկությունների համար զանգահարել (010) 36-31-83 հեռախոսահամարով: